ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ * НАУЧНАЯ ЖИЗНЬ

Երկրաբանություն և աշխարհագրություն 52(3), 2018 *Геология и география*

ԵՊՀ 100 ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ե. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ *

ԵՊՀ Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոն, Հայաստան

Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի միջոցառումների պլանում՝ նվիրված ԵՊՀ հիմնադրման 100 ամյակին, նախատեսվել էր 2018 թ. սեպտեմբերի 27–29 ընկած ժամանակահատվածում անցկացնել միջազգային գիտական կոնֆերանս “Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները” թեմայով: Կազմվել էր կազմկոմիտե ԵՊՀ-ի ռեկտոր պարոն Ա. Սիմոնյանի գլխավորությամբ, որտեղ ընդգրկված էին ինչպես Հայաստանի, այնպես էլ արտերկրի աշխարհագրության և երկրաբանության բնագավառի լավագույն մասնագետներ: Կազմկոմիտեի կազմում ընդգրկվել էին. ԵՊՀ ռեկտոր Արամ Հրաչիկի Սիմոնյանը; ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան, երկրաբ. գ.թ., դոցենտ Մարատ Արիսի Գրիգորյանը; ԱՀ նախագահի խորհրդական, երկրաբ. գ.դ, պրոֆեսոր, ՌԴ բնական ԳԱ անդամ, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր Գրիգոր Արկադիի Գաբրիելյանցը; ՀՀ ԳԱԱ օտարերկրյա անդամ, երկրաբ. գ.դ., Լիլ-1 համալսարանի Գիտություններ Երկրի մասին բաժնի պրոֆեսոր Տանիել Դանիելյանը; Հռոմի “La Sapienza” համալսարանի Քիմիայի դեպարտամենտի աշխատակից Եղիս Քեհյանը; ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի փոխդեկան, տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Պանդուխտի Վարդանյանը; ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի վարիչ, երկրաբ. գ.թ., դոցենտ Ռուբեն Սուրենի Մովսեսյանը; ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի երկրաֆիզիկայի ամբիոնի վարիչ, երկրաբ. գ.թ., դոցենտ Գագիկ Վարազդատի Մարկոսյանը; ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ռեգիոնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների ամբիոնի վարիչ, երկրաբ. գ.թ., դոցենտ Շահեն Վոլոդյայի Խաչատրյանը; ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ, երկրաբ. գ.դ. պրոֆեսոր Սարգիս Հրաչիկի Հայրոյանը; Բեռլինի Հումբոլդի անվան համալսարանի, աշխարհագրության ֆակուլտետի

* E-mail: emanukyan@ysu.am

հողերի աշխարհագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչ, աշխ. գ.դ., պրոֆեսոր Հիլմար Շրոյդերը; ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ, աշխ. գ.դ., պրոֆեսոր Թրահել Գերասիմի Վարդանյանը; ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչ, աշխ. գ.թ., դոցենտ Պետրոս Գարուշի Դավթյանը; ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ, աշխ.գ.թ., դոցենտ Ակսել Հարությունի Պոտոսյանը; ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սերվիսի ամբիոնի վարիչ, աշխ. գ.թ., դոցենտ Սեյրան Ռաֆիկի Սուվարյանը; երկրաբ. գ.թ. ասիստենտ, ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտքարտուղար Եսթեր Սոսի Մանուկյանը:

Կազմկոմիտեի կողմից կատարվել էր ծավալուն աշխատանք տարբեր երկրների համապատասխան բուհական և գիտական կենտրոնների հետ կապ հաստատելու և տեղեկացնելու կոնֆերանսին մասնակցելու, զեկուցումներ ներկայացնելու պայմանների վերաբերյալ: Կատարած աշխատանքների արդյունքում կոնֆերանսի անցկացումից մեկ ամիս առաջ հանրապետությունից և արտերկրից ստացվել էին թվով 120 հայտ մասնակցության համար: Նախապես ստանալով հեղինակների համաձայնությունը և հավաստիացումն իրենց մասնակցության և զեկուցումը կարդալու վերաբերյալ, կազմկոմիտեի կողմից կազմվեց կոնֆերանսի անցկացման ծրագիր՝ նշելով ցեկուցումների անվանումները, հեղինակները, լսարանը և ժամը: Ելնելով ներկայացված զեկուցումների մեծ թվաքանակից և մասնագիտական ուղղվածության հարցադրումներից՝ զեկուցումները կազմակերպվեցին ըստ սեկցիաների՝ Սերվիս, Երկրաբանություն, Աշխարհագրություն, Ջրօդերևութաբանություն և Կլիմայագիտություն: Կոնֆերանսի բացումը տեղի ունեցավ սեպտեմբերի 27-ին ժամը 9.30 Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստերի դահլիճում: Բացման արարողությանը մասնակցում էին ՀՀ տարբեր բուհական գիտական, կազմակերպություններից հրավիրվածներ, ֆակուլտետի ուսանողներ և աշխատակիցներ: Կոնֆերանսում բացման խոսքով հանդես եկավ համալսարանի ռեկտոր պարոն Ա. Սիմոնյանը: Ողջունելով կոնֆերանսի բոլոր մասնակիցներին, նա հակիրճ ներկայացրեց ԵՊՀ-ն, նրա դերը հայ ժողովրդի կյանքում, կարևորեց կոնֆերանսի կազմակերպման և անցկացման նշանակությունն Աշխարհագրության և երկրաբանության գիտությունների զարգացման խնդրում: Ռեկտոր Ա. Սիմոնյանի բացման խոսքից հետո, ողջույնի խոսքով հանդես եկան՝ պրոֆ. Ա. Լազարովը (Բուլղարիա), Կոլյա Տեստորֆը (Գերմանիա) և պրոֆ. Ա. Բոգուշը (ՌԴ): Ինչպես նախատեսված էր ցուցադրվեց կարճամետրաժ ֆիլմ՝ նվիրված Երևանի պետական համալսարանի հիմնադրմանը և այսօրվա գործունեությանը: Կոնֆերանսի բացման արարողությունից հետո զեկուցումները շարունակվեցին Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մասնաշենքում՝ ըստ սեկցիաների, նախապես հատկացված լսարաններում, որոնք կահավորված էին անհրաժեշտ տեխնիկական բոլոր սարքավորումներով զեկուցումները բարձր մակարդակով ներկայացնելու համար: Բոլոր սեկցիաներում զեկուցումների քննարկման ժամանակ եղան գիտական բանավեճեր, հարցադրումներ, տեսակետների ընդունում և մերժում: Կցանկանայինք առանձնացնել տարբեր սեկցիաներում ներկայացված որոշ զեկուցումներ, որոնք առաջ էին քաշում իրենց բնագա-

վառների գիտության արդի խնդիրները, նրանց լուծման ճանապարհները և սպասվելիք արդյունքները: Առանձնացնենք հետևյալ զեկուցումները "Interferometric Sar Modeling of Geophysics Measurements" Andon Lazarov, Marat Grigoryan, Dimitar Minchev, Chavdar Minchev, Atanas Dimitrov (Բուրգասի Ազատ համալսարան), "Водный баланс и водный режим рек европейской территории России в современных климатических условиях" Фролова Н.Л., Григорьев В.Ю., Киреева М.Б. (Մոսկվայի Լոմոնոսովի անվ. պետական համալսարան), "Displacements on Soft Soils Sites at Strong Earthquake and Implementation of Seismic Joint" Razmik Atabekyan, Lusine Atabekyan (ՀՀ ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայություն), "ՀՀ տարածքում դիտարկված *M*>4 երկրաշարժերի կարճաժամկետ և միջնաժամկետ նախանշանների կատալոգ ըստ երկրաֆիզիկական և հիդրոերկրադինամիկական տվյալների" Ասլանյան Ս.Ռ., Ավետիսյան Ս.Մ., Ղարիբյան Զ.Վ., Հովհաննիսյան Ս.Ռ., Նազարեթյան Ս.Ն., Սարգսյան Հ.Վ., Տեր-Գրիգորյան Թ.Ս. (ՀՀ ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայություն), "ՀՀ հյուսիսային ծալքավոր մարզի երկրակեղևի նստվածքային շերտի ձևակառուցվածքի ուսումնասիրությունը ժամանակակից գետային ցանցի տվյալներով" Սարգսյան Ռ. (ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ), "Աշխարհագրությունը և արդի մարտահրավերները" Վարդանյան Թ.Գ. (ԵՊՀ), "Կայուն զբոսաշրջությունը որպես անհրաժեշտություն Հայաստանի հանրապետությունում" Սուվարյան Ս.Ռ. (ԵՊՀ): Կոնֆերանսը բարձր մակարդակով կազմակերպելու գործում մեծ էր ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի դերը, որպես հովանավորի, որն աջակցեց կոնֆերանսի կազմակերպմանը և զեկույցների հրատարակմանը:

ԵՊՀ-ում միջազգային կոնֆերանսի կազմակերպումը հնարավորություն ընձեռեց մեզ ոչ միայն խոսելու աշխարհագրության և երկրաբանության գիտական բնագավառում առկա խնդիրներից, այլև հնարավորություն տվեց պատշաճ ներկայացնելու ԵՊՀ-ն մեր արտասահմանյան հյուրերին, ծանոթացնելու հանրապետության տեսարժան վայրերին:

Կոնֆերանսի վերջին օրը բոլոր մասնակիցների կողմից ընդունվեց հռչակագիր գիտության և կրթության բնագավառներում հետագա համագործակցության համար:

Ստացվել է՝ 28.11.2018